

ՏԱԹԵՎ ԲԱԲԱՅԱՆ

*Բունկա Գակուին համալսարան,
Արվեստի և Դիզայնի ֆակուլտետ,
Ոսկերչության և մետաղի դիզայնի ծրագիր,
բակալավրի աստիճան
Էլ. հասցե՝ tatevbabayan996@gmail.com
DOI: 10.56925/2953-7894-2022.5-22*

ԿԱՐՄԻՐ ԳՈՒՆԱՆՎԱՆ՝ ԴԵՐԸ ՀԱՅ ԵՎ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր՝ գունագիտություն, լեզվամշակույթ, կարմիր գունանուն, գունանվան փոխաբերություն, դարձվածքներ, հայերեն, ճապոներեն:

Սույն հոդվածի նպատակն է պարզել հայերենում և ճապոներենում կարմիր գունանվան դերը, իր փոխաբերական իմաստները և դարձվածքներում գործածման եղանակը: Համեմատության միջոցով բացահայտել երկու լեզուներում «կարմիր» գունանվան փոխաբերական իմաստների և գործածման հիմնական նմանությունները և տարբերությունները:

¹ Գույներ արտահայտող անուն: Բացատրությունը վերցված է Սեդա Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (նոր բառեր, իմաստներ, դարձվածքներ, բառակապակցություններ, արտահայտություններ, հապավումներ), Երևան՝ «Նաիրի» հրատարակչություն, 2002թ., էջ 125, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=100&query=%D5%A3%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6>

Գույները մշտապես կարևոր դեր են խաղացել ցանկացած ազգի մշակույթի և ինքնագիտակցության մեջ: Անգամ ազգային հագուստի գունային համադրությունն ունեցել է յուրահատուկ դեր՝ մատնանշելով կրողի տարիքը, ամուսնական և սոցիալական կարգավիճակը: Համարվում էր, որ գույներն ունեն նաև մոգական նշանակություն, ուստի որոշակի գույնի առարկաները հնուց օգտագործվել են բազում ծիսակարգերում:² Կարմիր գույնն իր բազում երանգներով առկա է գրեթե բոլոր երկրների մշակույթներում՝ ունենալով իր յուրահատուկ դերն ու նշանակությունը:

Հայտնի փաստ է, որ կարմիր գույնն արտահայտվելով մշակույթի տարբեր ասպարեզներում, դարձել է հայ և ճապոնական գունային համալիրի կարևոր տարր: Իսկ լեզուն սերտ կապված է ազգային մշակույթին, մարդու կեցությանը և գիտակցությանը: Լեզվի միջոցով լեզվակիրը ոչ միայն արտահայտում է իր մտքերը, նաև արտացոլում է իր ազգի մշակութային և աշխարհայացքի յուրահատկությունը:³ Ուստի զարմանալի չէ, որ կարմիր գույնն իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում երկու երկրների լեզվամշակույթում՝ օգտագործվելով

² 東京商工会議所, カラーコーディネーションの基礎 —カラーコーディネーター一検定試験 3 級公式テキスト, 第 4 版, 2001, p. 164. (Tokyo Chamber of Commerce and Industry, *Basics of Color Coordination-Color Coordinator Certification Exam Level 3 Official Textbook*, 4th edition, 2001, p. 164).

³ Մնացականյան Գ., «Familie/ընտանիք» հասկացության լեզվական առկայացման միջոցների համեմատությունը գերմաներենում և հայերենում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2017, 1.2 (19), էջ 114, [http://ysu.am/files/SSS_BookCollect_1.2\(19\)_2017_pp.114-124.pdf](http://ysu.am/files/SSS_BookCollect_1.2(19)_2017_pp.114-124.pdf)

ոչ միայն որպես գույն նկարագրող բառ, այլ նաև դարձվածքներում, ասացվածքներում կամ երևույթ նկարագրող բառակապակցություններում:

Վերլուծության մեջ ներկայացված բառերը և բառակապակցությունները կարելի է դասակարգել՝ 1) բառեր, որտեղ առկա «կարմիրը»՝ գույնից բացի ունի նաև այլ իմաստ, 2) բառեր, որտեղ «կարմիրը» ունի միայն փոխաբերական իմաստ:

Կարմիր գունանվան դերը և հիմնական փոխաբերական իմաստները հայերենում

Հայերենի «կարմիր» գունանունը ծագել է սանսկրիտի «krmi» բառից, որը նշանակում է «կարմիր որդ», այն պատճառով, որ հնում կարմիր գույնը ստանում էին կաղնու որդերից:⁴

Հայ գեղարվեստական գրականության մեջ բավականին հաճախ կարելի է հանդիպել գունային մակդիրներ և փոխաբերական համեմատություններ: Հատկապես առասպելներում, հեքիաթներում և առակներում գունանուններով նկարագրվում են ոչ միայն առարկաները, այլ նաև զգացմունքները և վերացական երևույթները:⁵ Ուստի գունանուններն ակտիվ օգտագործվում են առօրյա դարձվածքներում և ասացվածքներում:

⁴ Հարությունյան Ա., *Գունանունների իմաստային կառուցվածքը և պատճառաբանվածությունը*, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» հանդես, N16, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 68, <http://ysu.am/files/%20%D4%B1.pdf>

⁵ Գրիգորյան Ս., *Հայերենի Գունանունների Ոճական արժեքը*, ԲԵՀ 1 (79), Երևան, 1993 թ., էջ 200, http://ysu.am/files/19S_Grigoryan-1460030299-.pdf

Հայտնի փաստ է, որ կարմիր գունանունը ժամանակակից հայերենում իմաստաբանորեն նմանակվում է մի շարք բառերի՝ արյուն, կրակ, գինի, նուռ, վարդ, մարջան և այլն:⁶ Բացի նմանակելուց, հայ լեզվամշակությամբ կարմիր գունանունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական փոխաբերական նշանակություններ: «Երջանկություն», «ամուսնություն», «տոնական տրամադրություն»՝ սրանք կարմիր գույնի մի քանի փոխաբերական իմաստներն են, որոնք տեղ են գտել գրականության մեջ և լայնորեն գործածվում են առօրյա խոսքում և դարձվածքներում:

Հոդվածում փորձ է արվում վերլուծել ամենաշատ կիրառվող դարձվածքները և բառակապակցությունները:

Հայտնի է, որ կարմիր գույնն իր կարևոր և անփոխարինելի դերն ունի հայկական ազգային հագուստում: Հաճախ ասելով տարազ՝ պատկերացնում ենք հագուստ, որի գերակշռող գույնը կարմիրն է: «*Կարմիր գոգնոց*» արտահայտությունը շատերին է ծանոթ: Հնում գոգնոցը, լինելով հայ կնոջ տարազի հիմնական և անփոխարինելի մաս, կապվում էր միայն ամուսնությունից հետո: Գոգնոցը հաճախ կարմիր էր, որը նաև չարիքից պաշտպանելու և պտղաբերության խորհուրդ ուներ, ուստի «կարմիր գոգնոց» բառակապակցությամբ

⁶ Ավետիսյան Լ., *Համեմատություն - դարձվածային միավորները ժամանակակից հայերենում*, Երևան, Էդիթ Պրինտ, 2018թ., էջ 111, <https://aspu.am/website/images/files/L.%20N.%20Avetisyan%20Hamematutyun%20-%20-%20dardzvacayin%20miavorner%20jamanakacic%20hayerenum%20201-8%20-%20menagrutyun.pdf>

սկսեցին անվանել ամուսնացած կանանց, և այժմ համարվում է կին, կողակից, ամուսին բառերի հոմանիշ:⁷

Հիմնականում ասոցացվելով տոնի, դրական լիցքերի հետ, կարմիր գույնը տարբ-մասնիկ է դարձել տոնական դարձվածքներում: Դրանցից են՝ «*կարմիր արև*», որը նշանակում է արևշատություն, «կարմիր խնձոր ուղարկել»՝ հրավիրել ⁸, «*կարմիր հագնել*» նշանակում է տոնական տրամադրության մեջ լինել:⁹ «*Կարմիր կապել*» դարձվածքը նշանակում է տղային ամուսնացնել, իսկ «*կարմիր թել կապել*»՝ նշան դնել:¹⁰

Սակայն ոչ միայն դրական և ուրախալի դարձվածքներում է կարմիր գունանունը օգտագործվում: Գեղարվեստական գրականության մեջ, ասոցացվելով արյան գույնի հետ, «կարմիրը» կարելի է հանդիպել «*կարմիր ջարդ*», «*կարմիր ցավ*» դարձվածքներում՝ զանգվածային կոտորած, մահ նշանակությամբ:¹¹ Հայերենում «կարմիր» բառը կարելի է օգտագործել որպես մարդուն բնութագրող բառ: «*Կարմիր արևից ընկածը*»

⁷ Ստեփանյան Ա., *Հայ ժողովրդական Տարազի Ջարդանախշերը (Օխային, Գունային և Նշանային Համակարգեր)*, Հայ ազգագրություն և բանահյուսություն, շ. 22, Երևան, 2007 թ., էջ 16, <https://arar.sci.am/dlibra/publication/-11779/edition/10441/content>

⁸ Սուքիասյան Ա., *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Երևան, 2009թ., էջ 509, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=47&dt=HY_HY&query=%D4%BF%D5%A1%D6%80%D5%B4%D5%AB%D6%80

⁹ Բեղիրյան Պ., *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Երևան, 2011թ., էջ 660, http://www.nayiri.com/imagedDictionary-Browser.jsp?dictionaryId=64&dt=HY_HY&query=%D4%BF%D5%A1%D6%80%D5%B4%D5%AB%D6%80

¹⁰ Գրիգորյան Ս., նշվ. աշխ., էջ 204-205:

¹¹ Նույն տեղում:

կնշանակի վաղամահ, իսկ «*կարմիր կով*»՝ շուտ բորբոքվող, բարկացկոտ:¹² Առհասարակ «*կարմիր կով*»-ը՝ որպես տոտեն կենդանի, առկա է հայ ժողովրդական հեքիաթներում: Կովակերպ կենդանին, մասնավորապես տվյալ կենդանու եղջույրները՝ որք մնացած երեխաներին մայրական կրծքի փոխարինող են հանդես եկել, երբեմն նաև խորթ մոր կողմից հալածանքների ենթարկված երեխաներին սփոփող էակ:¹³ Սակայն մարդուն բնութագրող դարձվածք դառնալուն պես, փոխում է իր նշանակությունը՝ դառնալով բնավորության բացասական գիծ ներկայացնող բառակապակցություն: Հետաքրքիր է, որ «*կարմիր կով*»-ն իր տեղը գտնելով «*Կարմիր կովն իր կաշին չի փոխում*» ասացվածքում, մեկնաբանվում է որպես «մարդ իր բնավորությունը չի փոխում»՝ կրկին ստանալով բացասական իմաստ:

Վերլուծելով վերը նշված օրինակները՝ կարելի է գալ հետևյալ եզրակացության: Հայերենում «*կարմիր*» գունանունը դարձվածքներում հանդես է գալիս որպես *գոյական*՝ «*կարմիր (ի՞նչ) հագնել*», *ածական*՝ «*կարմիր (ի՞նչպիսի) արև*»: Ունի ն' դրական, ն' բացասական փոխաբերական իմաստներ: Իսկ գունանվան գործածումը դարձվածքների կազմում կարելի է

¹² Բաղդադյան Մ., *Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքների կառուցվածքային տիպերը և քերականական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում*, Լեզու և լեզվաբանություն զիտական հանդես, Հատոր 1, Երևան, 2019թ., էջ 74-77, <https://arar.sci.am/dlibra/publication/216588/edition/197294>

¹³ Հայրապետյան Թ., *Կարմիր կովի մոտիվը հայկական հրաշապատում հեքիաթներում*, Պատմաբանասիրական հանդես, № 3, Երևան, 2010 թ., էջ 240, <http://iae.am/hy/database/543>

դասակարգել հետևյալ կերպ՝ կարմիր + գոյական (անշունչ առարկա)՝ «կարմիր գոգնոց»; կարմիր + գոյական (շնչավոր առարկա)՝ «կարմիր կով»; կարմիր + գոյական (վերացական երևույթ)՝ «կարմիր ցավ»; կարմիր + բայ՝ «կարմիր կապել»:

Կարմիր գունանվան դերը և հիմնական փոխաբերական իմաստները ճապոներենում

Ստորև փորձ կկատարվի ներկայացնել «կարմիր» գունանվան գործածությունը ճապոներենում:

Ճապոներենում կարմիր 「赤」 «ակա» է: Այն 「明る い」 («ակարուի») «լուսավոր» բառի հիման վրա է ստեղծվել: Ըստ Նոբորու Կուսակավայի «Ստուգաբանական բառարան, գոյականներ»-ի¹⁴ 「赤」 («ակա») «կարմիր» գոյականն առաջացել է 「明し」 («ակաշի») բառից, որը նշանակում է՝ «լուսանում է, և երկինքը քիչ-քիչ լուսավորվում է, դառնալով կարմրավուն»:¹⁵

Այն որպես գոյական 赤 («ակա») է, իսկ որպես ածական՝ 赤い («ակաի»): Հանդես գալով որպես բառի մասնիկ՝ կարող է

¹⁴ 草川昇, 語源辞典, 名詞編, 東京堂出版, 2003. (Noboru Kusakawa, "Language Dictionary, Nomenclature", Tokyodo Publishing, 2003)

¹⁵ 岩本眞樹, 赤をめぐる一考察－慣用表現から見る言語的世界像の白露比較, 札幌大学総合論叢第 51 号, 2021 年 3 月, p. 94. (Maki Iwamoto, *Phraseological Units and Proverbs with Component "Red Color" and Their Reflection in the Linguistic Picture of the World : A Comparison of Russian and Japanese*, The Sapporo University Journal (51), March 2021, p. 94), https://sapporo-u.repo.nii.ac.jp/?action=repository_action_common_download&item_id=7769&item_no=1&attribute_id=22&file_no=1

կարդացվել նաև «սեկի»: Փոխաբերական իմաստներից է՝ ակնհայտ, բացահայտ:¹⁶ Ամենից առաջ անհրաժեշտ է նաև ներկայացնել ճապոներենում բառերի կազմվածքը և դրանց գրելաձևը: Ճապոներենում բառերի մեծամասնությունը կազմված է մեկ կամ մի քանի հիերոգլիֆներից՝ կանջիներից: Որպես օրինակ կոհտարկենք 「赤毛」 («ակագե») բառը, որը նշանակում է «շեկ մազեր», «կարմրահեր», այսինքն՝ մազերի կարմիր գույնը: Կազմված է 「赤」 («ակա») «կարմիր» և 「毛」 («կե») «մազեր» բառերից: Այստեղ «ակա» բառն ունի իր ուղիղ նշանակությունը՝ կարմիր գույն: Սակայն հաճախ բառերում կամ բառակապակցություններում «ակա»-ն ունի այլ՝ փոխաբերական նշանակություն: Այն հաճախ ասոցացվում է՝ ամոթ / զայրույթ, տաք արյուն / խանդավառ, դեֆիցիտ (պակասուրդ), վտանգ / ուշադրություն, շնորհավորանք, կին իմաստների հետ:¹⁷

Ստորև կներկայացվեն ճապոներենում «կարմիր» գունանունն պարունակող դարձվածքների և բառերի մի քանի օրինակներ, որոնցում «կարմիրը» ունի փոխաբերական իմաստ:

¹⁶ Фельдман-Конрад Н., *Японо-Русский учебный словарь иероглифов*, Москва, 1977 г., стр. 567.

¹⁷ 郭晨然, *色彩語彙に関する比喩的表現のイメージの考察 — 中国語と日本語の基本色を中心に —*, 一橋日本語教育研究 2 号, 2013, p.126, <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/27974/jle0000201250.pdf> (Guo Chenran, *A Comparative Study of Metaphorical Images of Color Words: Focusing on the Basic Colors in Chinese and in Japanese*, The Hitobashi Journal for Japanese Language Education, N 2, 2013, p. 126).

Կարմիր գունանունը լեզվի մեջ կարող է նշանակել «ամբողջովին» 「全<の」 («մատտակունո») կամ «ինչպես կա» (「ありのままに」) «արինոմամանի»: 「赤の他人」 («ակա նո տանին»), որը նշանակում է «ամբողջովին անծանոթ մարդ»: Այս բառակապակցությունը բավականին հաճախ կարելի է լսել առօրյա խոսակցության ժամանակ: Վերոնշյալ դարձվածքում կարմիրն ընդգծում է մարդու «ամբողջովին» անծանոթ լինելը: Նման նշանակության այլ բառեր են՝ 「真つ赤な嘘」 («մակկանա ուսո»)՝ «անամոթ սուտ», 「赤恥」 («ակահաջի»)՝ «սաստիկ ամոթ», 「赤貧」 («սեկիհին»)՝ «ծայրահեղ աղքատություն», որտեղ «սուտ», «ամոթ» և «աղքատություն» բառերին «ակա»-ի միջոցով տրվում է թե «ամբողջովին», թե «բացահայտ» իմաստը:¹⁸

「赤裸」 («ակահադակա»)՝ «ամբողջովին մերկ», 「赤心」 («սեկիշին»)՝ «ամբողջովին մաքուր սիրտ, անկեղծ» բառերը նույնպես կարելի է ավելացնել այս շարքին:

Ճապոներենում «ակա»-ով ամենից շատ օգտագործվող բառերը 「赤ちゃん」, 「赤ん坊」, 「赤子」 («ակաչյան», «ականբոու», «ակագո») բառերն են: Երեքն էլ ունեն նույն նշանակությունը՝ նորածին երեխա: 「赤子」 («ակագո») բառի հիմքում ընկած է 「明るい」 («ակարուի») «լուսավոր» կամ 「明ける」 («ակերու») «արշալույս» բառերը: Եվ ասում են, թե 「

¹⁸ 岩本眞樹札 (Maki Iwamoto), նշվ. աշխ., էջ 110, 115:

赤子」 («ակագո») բառն ասոցացվում է «մաքուր», «անպղտոր», «սկիզբ» պատկերի հետ, որը գալիս է առավոտյան ծագող արևից:¹⁹ Եվս մեկ բացատրություն կա, թե ինչու է օգտագործվում 「赤」 («ակա») բառը: Ծնվելուն պես մաշկի կարմրության պատճառով է, որ նորածին երեխաներին անվանում են «ակաչան», «ականբո» կամ «ակագո»:²⁰ Լինելով «նորածին» իմաստով բառեր՝ օգտագործման ժամանակ չեն ասոցացվում «կարմիր» գույնի հետ:

Հեռավոր Արևելքը լի է կյանքի տարբեր ոլորտների հետ կապված հավատամքներով, որոնք հնուց արմատավորվել են ժողովուրդների հոգեբանության մեջ՝ դառնալով առօրյաի անբաժան մաս: Ճապոնիայում հավատամք կա, որ ամսվա յուրաքանչյուր օր կարող է լինել բախտավոր կամ հակառակը՝ անբախտ, և հիմնականում կապված են հին չինական լուսնային արեգակնային օրացույցի հետ: Այդ օրերն են՝ 「先勝」 («Սենշյոու»), 「友引」 («Տոմոբիկի»), 「先負」 («Սենբու»), 「仏滅」 («Բուցումեցու»), 「大安」 («Դաիան») և 「赤口」 («Շյակկոու»):²¹ Ճապոնական օրացույցներում ամիս ամսաթվի հետ

¹⁹ Նույն տեղում, էջ 112:

²⁰ <https://gogen-yurai.jp/>, բառերի ստուգաբանության կայքէջ: <https://gogen-yurai.jp/akachan/>

²¹ Ósk Hafbergdóttir L., *Contemporary Popular Beliefs in Japan*, University of Iceland, 2010, p. 20-21, <https://skemman.is/bitstream/1946/6174/1/BA%20Ortger%C3%B0.pdf>

Հեղինակը նշում է, որ համաձայն հավատամքի՝ 「赤口」 («Շյակկոու»)-ն դա այն օրն է, երբ ամբողջ օրը լինելու է դժբախտ, բացառությամբ ցերեկային ժամերի:

մեկտեղ հաճախ գրվում է նաև այդ օրվա բախտավոր կամ անբախտ լինելը: Ուստի կարևոր տոնակատարություն կազմակերպելիս ճապոնացիները հարկ են համարում նաև ճշտել այդ օրվա լավ կամ վատ լինելը: Ինչպես տեսնում ենք 「赤口」 (Շյակկոու) բառի բաղկացուցիչը նույնպես «կարմիր»-ն է:

Արդեն նշվեց, որ ճապոներենում «ակա» (կարմիր) բառի փոխաբերական իմաստներից է դեֆիցիտը: Հենց «դեֆիցիտ» ճապոներեն կլինի 「赤字」 («ակաջի»): 「字」 («ջի») նշանակում է տառ կամ նշան: 「日本国語大辞典」 (“Nihon Kokugo Daijiten”) -ում տրվում է բառի հետևյալ բացատրությունը՝ անբավարար գումար եկամուտների և ծախսերի հաշվարկում, այսինքն՝ եկամուտների և ծախսերի հաշվարկման արդյունքում ծախսվել է ավել, քան եկամուտն է: Հնում հաշվապահական հաշվարկներում ավել ծախսված թվերը գրվում էին կարմիր գույնով²², ուստի սկսվեց շրջանառվել 「赤字」 («ակաջի») արտահայտությունը, որը ստացավ «պակասուրդ» իմաստը:

「隣の花は赤い」 («տոնարի նո հանա վա ակաի») ասացվածքը բառացիորեն կթարգմանվի՝ «հարևանի ծաղիկներն ավելի կարմիր են»: Նշանակում է, որ այլ մարդկանց

²² 戸谷将義, 中国語における日本語の借用と意味変化 — “赤字”を例として — , 愛知大学中日大辞典編纂所 『日中語彙研究』 第 10 号 2020, p. 150 (Masayoshi Todani, *Words Borrowing and Semantic Change from Chinese to Japanese-Taking “Akaji” as an Example*, Aichi University Chinese-Japanese Dictionary Compilation Center "Japanese-Chinese Vocabulary Study", No. 10, 2020, p. 150), <https://leo.aichi-u.ac.jp/~jiten/pdf/word-vol10/07.pdf>

իրերը կամ կյանքն ավելի լավն է թվում, քան մերը: Անգլերեն համահունչ տարբերակն է՝ “The grass is always greener on the other side of the fence”, իսկ ռուսերեն՝ «Хорошо там, где нас нет»: Հնում գործածվել է 「よその花はよく見える」 (յոսոս նո հանա վա յոկու միերու)՝ «ուրիշի ծաղիկն ավելի լավ տեսք ունի» տարբերակը: Մեջլի դարաշրջանից (1868-1912 թթ.) արմատավորվել և գործածության է անցել 「隣の花は赤い」 (տոնարի նո հանա վա ակաի)՝ «ուրիշի ծաղիկը կարմիր է» տարբերակը:²³

Վերլուծելով ներկայացված ճապոներեն լեզվում «կարմիր» գունանուն պարունակող բառերի և դարձվածքների օրինակները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ ճապոներեն լեզվում 「赤」 («ակա») բառը հանդես է գալիս որպես գոյական և ածական, և ինչպես հայերենում, բառերին փոխանցում է դրական կամ բացասական երանգ: Սակայն հայերեն և ճապոներեն լեզուների տարբերության պատճառով, օգտագործման եղանակը տարբերվում է: Ինչպես նշվեց ճապոներենի բառերը կարող են բաղկացած լինել մի քանի հիերոգլիֆներից: Ուստի, եթե հայերենում հիմնականում կարմիրը հանդես է գալիս բառակապակցության տարր-մասնիկ, ապա ճապոներենում կարող է լինել բառի հատված-տարր: Պարզաբանելու համար դիտարկենք հետևյալ օրինակը: 「赤信号」 («ակաշինգոու») բառը հայերեն նշանակում է «լուսացույցի

²³ www.kotobank.jp, բառարանների օնլայն տարբերակների կայքէջ, <https://kotobank.jp/word/%E9%9A%A3%E3%81%AE%E8%8A%B1%E3%81%AF%E8%B5%A4%E3%81%84-584305>

կարմիր գույնը (լույսը)»: Եթե ճապոներենում այն դիտարկվում է որպես մեկ ամբողջական բառ, ապա հայերենում նույն երևույթը նկարագրելու համար օգտագործվում է 3 բառ: Այդ իսկ պատճառով, հարկ է նշել, որ ճապոներենում «ակա» բառ պարունակող արտահայտությունները և բառերը հայերենից ավելի շատ են և գործածվում են «կարմիր»-ի թե՛ ուղիղ և թե՛ փոխաբերական իմաստներով:

**Հայերենում և ճապոներենում կարմիր գունանվան
գործածման նմանությունների և տարբերությունների
օրինակներ**

Հայ մշակույթում կարմիր գույնն անբաժան է եղել հարսանեկան արարողությունից, ուստի իր տեղն է գտել նաև ժողովրդական հարսանեկան մի շարք դարձվածքներում: Եվ ինչպես ներկայացվեց հայերենում «կարմիր կապել» դարձվածքը նշանակում է տղային ամուսնացնել, իսկ «կարմիր թել կապել»-ը՝ նշան դնել: Ուշագրավ է այն փաստը, որ ճապոներենում նման նշանակությամբ դարձվածք ևս գոյություն ունի: Հարկ է նշել, որ ճապոներենում կարմիր գույնի փոխաբերական իմաստներից մեկը «ճակատագիր» է: Այդ իմաստով ամենից շատ օգտագործվող բառակապակցություններն են՝ 「赤縄を結ぶ」 («սեկիջոու ո մուսուրու») «կարմիր պարան կապել» կամ 「赤い糸で結ばれる」 («ակայ իտո դե մուսուրարերու») «կարմիր թելով կապել»: Երկուսն էլ ասոցացվում են ամուսնության հետ և նշանակում են «վիճակված է ամուս-

նանալ»: Ճապոնիայում հավատամք կա, որ այն մարդկանց ճկոյթները, որոնք վիճակված են ամուսնանալ, կապված են անտեսանելի կարմիր թելով: Այդ հավատալիքը Ճապոնիա է ներթափանցել Չինաստանից:²⁴ Հայերենի և Ճապոներենի այս արտահայտություններում առկա են հետևյալ նմանությունները՝ *իմաստային* (ամուսնանալ), *գունային* (կարմիր), *առարկայական* (թել, պարան), *գործողություն* (կապել):

Ինչպես արդեն նշվեց հայերենի «*Կարմիր հագներ*» դարձվածքը նշանակում է «տոնական տրամադրություն»: Ճապոներենում կա համահունչ դարձվածք՝ 「赤い着物を着る」 («ակաի կիմոնո օ կիրու»), որը նշանակում է «կարմիր կիմոնո կրել»: Սակայն ի տարբերություն հայերենի՝ չունի որևէ տոնական և ուրախալի իմաստ: Այն նշանակում է «բանտ նստել», «պատիժ կրել»: Բանն այն է, որ Մեիջի (1868-1912թթ.) և Տաիշյո (1912-1926թթ.) դարաշրջաններում բանտարկյալներին կարմիր գույնի հագուստ էին հագնում:²⁵ Ուստի 「赤い着物を着る」 («ակաի կիմոնո օ կիրու») դարձվածքը սկսվեց գործածվել որպես «պատիժ կրել» բառի հոմանիշ: Այստեղ դիտարկվում է

²⁴ 岩本眞樹札 (Maki Iwamoto), նշվ. աշխ., էջ 111:

²⁵ dictionary.goo.ne.jp կայքէջ թվայնացված բառարանների կայքէջ, <https://dictionary.goo.ne.jp/word/%E8%B5%A4%E3%81%84%E7%9D%80%E7%89%A9%E3%82%92%E7%9D%80%E3%82%8B/>

Կիմոնոն Ճապոնական ազգային հագուստ է: Արտաքնապես նման է T-աձև խալաթի: Կախված կիմոնոյի գույնից, ձևից, նախշազարդերից՝ կարելի է հասկանալ կնոջ տարիքը և ամուսնական կարգավիճակը: Կիմոնոն կապվում է «օբի» կոչվող գոտու միջոցով: Էդո դարաշրջանից (17-19-րդ դարեր) կիմոնոյի արտաքին տեսքը գրեթե անփոփոխ է:

այն փաստը, որ «կարմիր հագնել» և 「赤い着物を着る」 («ակաի կիմոնո օ կիրո») դարձվածքների ուղիղ իմաստները համընկնում են: Նույնն են թե՛ գործողությունները (հագնել), թե՛ հագուստի գույնը (կարմիր), սակայն իրական իմաստը բացարձակապես տարբերվում է, հայերենում՝ տոնական, լավ տրամադրություն (դրական իմաստ), ճապոներենում՝ պատիժ կրել (բացասական իմաստ) : Դիտարկենք ևս մեկ օրինակ: Հայերենում «կարմիր օր» դարձվածքը նշանակում է «լավ, ուրախ կյանք»,²⁶ իսկ ճապոներենում գոյություն ունի 「赤日」 («շակունիչի») բառը: Այս բառի իմաստներից մեկը նույնն է, ինչ վերոհիշյալ 「赤口」 («շակկոու») բառը:²⁷ Այստեղ անհրաժեշտ է վերլուծել բառի բաղկացուցիչ հիերոգլիֆների իմաստները: 「赤」 «ակա» կամ «շակու» նշանակում է կարմիր, իսկ 「日」 («նիչի») հիերոգլիֆի իմաստներն են «արև» կամ «օր»: 「赤日」 («շակունիչի») բառում այն, ամենայն հավանականությամբ, օգտագործվում է իր «օր» նշանակությամբ, քանի որ կապված է ամսվա դժբախտ օրերի հետ: Այս արտահայտություններում առկա «կարմիր» և «օր» բառերը չնայած նույնն են, սակայն իմաստային վերլուծության ժամանակ հանդիսանում են որպես հականիշ իմաստներով արտահայտություններ:

²⁶ Գրիգորյան Ս., նշվ. աշխ., էջ 204 :

²⁷ <https://sakura-paris.org/dict/> կայքէջ, բառարանների օնլայն տարբերակների կայքէջ: Նյութը վերցված է 大辞泉 «Դաիջիսեն» բառարանից, որը թողարկվել է Շոգակուկանի կողմից 1995թ. և 1998 թ., https://sakura-paris.org/dict/%E5%A4%A7%E8%BE%9E%E6%B3%89/content/7035_706

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ գունանունները խոսքի ձևավորման կարևոր տարրերից մեկն են: Տարբեր լեզուներում գունանունների դերը և նշանակությունն ուսումնասիրելով և համեմատելով՝ կարելի է ըմբռնել ազգային և լեզվի մշակույթների յուրահատկությունները, լեզվակիրների աշխարհայացքի ընդհանուր կետերը և առանձնահատկությունները, ինչպես նաև լեզվամշակույթի վերլուծության միջոցով ավելի խորքից հասկանալ մարդկային արժեքները և ազգային հոգեբանությունը:

TATEV BABAYAN

*Bunka Gakuen University, Faculty of Art and Design,
Program in Jewelry and Metal Design, bachelor degree
E-mail: tatevbabayan996@gmail.com*

THE ROLE OF RED COLOR NAME IN ARMENIAN AND JAPANESE LANGUACULTURE

SUMMARY

Keywords: Colorescence, languaculture, red color name, color name metaphor, phrases, Armenian, Japanese.

Language is closely related to the culture, worldview and identity of any nation. Being an important element of the culture of many nations, the red color has found its unique role in the languaculture of nations as well. Armenian and Japanese are no exceptions. The “red” color name has many metaphorical meanings in the mentioned languages. Among the most used ones in Armenian are: happiness, marriage, festive mood, blood, pain, etc. In Japanese: purity, luck, beautiful, marriage, obvious, deficit, etc. Although Armenian and Japanese belong to different language families and have different syntax, some phrases involving the "red" color name, have similar metaphorical meaning or phrase structure.

In Japanese and Armenian, "red" appears both as an adjective and as a noun. It is widely used in literature and everyday conversations. Becoming a component part of phrases, it gives a positive or negative tone to the whole phrase. In order to get clearer idea of the similarities and differences between the usage of "red" in Armenian and Japanese, the following examples will be considered:

※ The phrases 「赤縄を結ぶ」 and «կարմիր թել կապել» ("tie a red thread"), both are related to marriage. The color "red", the words "thread/rope" and "tie" are present in both phrases. It is a vivid example of the similar use of “red” in Armenian and Japanese.

※ The phrases 「赤い着物を着る」 and «կարմիր հագնել» ("wear red"), although they are made of the same words: "red" and "to wear", phrases have opposite meanings: "punishment" and "good day". Here we see the difference in overall meaning.

In conclusion, color names are one of the important elements of speech formation. By studying the role and meaning of color names, it is possible to understand the culture and worldview of the nation.